# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-592-23.05.2023-ՖՎ-011/0), «ՎԻԴԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-592[1]-23.05.2023-ՖՎ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | ՀՀ կառավարություն | «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի 1--րդ հոդված | Առաջարկվում է «Բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների» բառերն առաջարկում ենք փոխարինել «բանկային հաշվի և (կամ) վճարային քարտի» բառերով: | Ընդունվել է:<br>Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |
| 2. | ՀՀ կառավարություն | «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի 1--րդ հոդված | Առաջարկվում է օրենքի 6-րդ հոդվածի 2.1-ին մասում «դ1» կետը լրացնելու փոխարեն նույն մասի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«դ) ինտերնետ շահումով խաղի կազմակերպչի սերվերում ստեղծում է յուրաքանչյուր խաղացողի համար հատուկ խաղային հաշիվ, որը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային | Ընդունվել է:<br>Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հաշիվների կամ քարտերի միջոցով.»: | | |
| 3. | ՀՀ կառավարություն | «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի 1--րդ հոդված 2--րդ հոդված | Առաջարկվում է 1-րդ հոդվածում օգտագործվող «(այսուհետ՝ օրենք)» բառերն հանել, 2-րդ հոդվածում օգտագործվող «Օրենք» բառը գրել փոքրատառերով: | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |
| 4. | ՀՀ կառավարություն | «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխ | Առաջարկվում է սահմանել համապատասխան պատժամիջոց: | Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածով՝ գործող օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դ) կետը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն որի սահմանվել է երկու հարյուր հազար դրամի չափով տուգանք: | Ընդունվել է: |
| 5. | ՀՀ կառավարություն | «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու | Առաջարկվում է օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետի 2-րդ նախադասությունը «եղանակով» բառից հետո լրացնել «, բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունն | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մասին նախագծի 2--րդ հոդված | հաշիվների միջոցով» բառերով: | | |
| 6. | << **կառավարություն** | «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի 1-րդ հոդված | Առաջարկվում է «Բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների» բառերն առաջարկում ենք փոխարինել «բանկային հաշվի և (կամ) վճարային քարտի» բառերով: | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |
| 7. | << **կառավարություն** | «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի 2-րդ հոդված | Առաջարկվում է 1-րդ հոդվածում օգտագործվող «(այսուհետ՝ օրենք)» բառերն հանել, 2-րդ հոդվածում օգտագործվող «Օրենք» բառը գրել փոքրատառերով: | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. | ՀՀ կառավարություն | «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի 1-րդ հոդված | Առաջարկվում է փոփոխություն կատարել «Վիճակախաղերի մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասում (մասն առաջարկվել է շարադրել նոր խմբագրությամբ), այսինքն, քննարկվող նախագծով որևէ լրացում չի առաջարկվում: Հետևաբար, առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ (նորմատիվ իրավական ակտն ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը)՝ անհրաժեշտ է քննարկվող նախագծի վերնագիրը համապատասխանեցնել նախագծի բովանդակությանը: | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | ՀՀ կառավարություն | «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի 1-րդ հոդված | Առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասի 3-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տոտալիզատորի մասնակցի հաշիվը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով:» | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ | Ընդունվել է: |
| 10 | ՀՀ կառավարություն | «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի 1-րդ հոդված | Առաջարկվում է «Վիճակախաղերի մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասը բաղկացած է երկու պարբերություններից, որոնցից երկրորդը համարակալված չէ, մինչդեռ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի: | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ | Ընդունվել է: |